Օրինակ նամակի վրանապետութեան։

ԳԼՈՒԽ ԿԹ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեան աշխարհին փայտականու և թուղթ փոխանորդութեան նոցայ ընդ քեզ, և 'ի վերայ երդման քոյ հաստատեցաք 'ի միտս մեր հաւատարիմ քոյ լինիլ տանն հայոց, տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօնի ամենայն վրանապետութեան ժամանակաւ երիս ամաւ, զի դու Տեառն Թադէոս վարթանակերտու իշխեսցես 'ի վերայ ամենայն վրանակար դերձկաց և ամենայն վրանի արհեստաւորաց, և զգուշութեամբ արբունս հասուցանես ամենայն վրանս որում յօրինի 'ի յերեսս աշխարհին հայոց վասն բնակութեան, եթէ մի արանց, եթէ վեց արանց և եթէ երկոտասան արանց և եթէ քսան և չորս արանց, ամենայն վրանք յօրինեսցի այս չորս տեսակս, բարձրութիւն, լայնութիւն և երկայնութիւն համեմատ ըստ իւրաքանչիւր աստիճանի վրանի, նմանապէս սիւնք, գոտակ սեանց, և հաստութիւն չուանի համահաւասար, ներս վրանին սպիտակ զոր ինչ կտաւիւք, որ գոցի շահաւէտ և 'ի դուրսկոյս կարմիր, և տուաք իշխանութիւն քեզ վրէժխնդիր լինիլ 'ի արհեստաւոր վրանակարացէ եթէ գուցէ զոր ոք յօրինեալ աւել կամ պակաս ձևակեր-